ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

05 հոկտեմբեր 2022 թվական **ք. Արթիկ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2023 թվականին Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից համաֆինանսավորվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի հայտերի կազմման նպատակով նախատեսված ծրագրերի վերաբերյալ հանրային քննարկումների

Հանրային քննարկումը սկսվեց ժամը 15:00-ին:

Ներկա էին՝

Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալներ, համայնքապետարանի աշխատակիցներ, վարչական շրջանի ղեկավարներ, համայնքի բնակիչներ:

Հանրային քննարկումը վարում էր Արթիկ համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանի կողմից լիազորված անձ՝ Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Աջամօղլյանը:

Նա ողջունեց ներկաներին, խնդրեց հնչեցնել իրենց հարցերը, հանդես գալ առաջարկություններով և դիտողություններով: Ապա խոսքը փոխանցեց Արթիկի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, տուրիզմի և արտաքին կապերի բաժնի պետ՝ Մ. Մովսիսյանին:

Ելույթ ունեցան՝

Արթիկի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, տուրիզմի և արտաքին կապերի բաժնի պետ Մ. Մովսիսյանը, նա ընդհանուր գծերով ներկայացրեց 2023 թվականին իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերը:

1. Արթիկ համայնքի թվով 6 գյուղերի գազատարի ներքին ցանցը կկառուցվի (Լեռնակերտ,Գեղանիստ, Հոռոմ, Մեծ Մաթաշ, Փոքր Մանթաշ և Հայրենյաց)՝ ծրագրի ընդհանուր արժեքը մոտ 85.000.000 ՀՀ դրամ, համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը մոտ ՝ 34.000.000 /40%/ ՀՀ դրամ:
2. Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Իսահակյան 60 հասցեում գտնվող թիվ 1 մանկապարտեզի և Լեռնակերտ գյուղի մանկապարտեզի շենքերը հիմնանորոգվելու են՝ ծրագրի ընդհանուր արժեքը՝ 299.957.143 ՀՀ դրամ, համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը մոտ ՝ 74.900 000/25%/ ՀՀ դրամ:
3. Արթիկ համայնքի Հոռոմ, Անուշավան գյուղերի մշակույթի տները և Մեղրաշեն գյուղի արվեստի դպրոցը վերանորոգվելու են: Վերանորոգվելու է նաև Լուսակերտ վարչական շենքի և համայնքային կենտրոնի տանիքները: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է մոտ ՝ 152.555.000 ՀՀ դրամ, համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը մոտ 83.900.000/55%/ ՀՀ դրամ:

4. Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի թվով 15 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում: : Դրանք են՝ (Սասունցի Դավիթ 9 հասցեում, Սասունցի Դավիթ 6 հասցեում, Լմբատ 2 շենք 6 հասցեում, Լմբատ 2 շենք 18 հասցեում, Լմբատ 2 շենք 35 հասցեում, Լմբատ 1 շենք 45 հասցեում, Լմբատ 1 շենք 3 հասցեում, Լմբատ 1 շենք 5 հասցեում, Լմբատ 234 շենք , Տուֆագործների 39բ հասցեում և Տուֆագործների 39գ հասցեում, Տոնականյան 32 շենք. Տոնականյան 38 շենք և Անկախության 17 շենք, Աբովյան 22 շենք)՝ ծրագրի ընդհանուր արժեքը մոտ՝ 115.000.000 ՀՀ դրամ, համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը մոտ՝ 51.750.000/45%/ ՀՀ դրամ:

5. Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Անկախության, Բաղրամյան, Աբովյան փողոցների և Սարատակ գյուղի 5-րդ փողոցի ասֆալտապատում: Ծրագրի ընդհանուր արժեքը մոտ՝ 250.000.000 ՀՀ դրամ, համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը մոտ՝ 137.500.000/55%/ ՀՀ դրամ:

6. Արթիկ համայնքի թվով 8 գյուղերի խմելու ջրագծի վերանորոգում: (Մեծ Մանթաշ, Փոքր Մանթաշ, Արևշատ, Գեղանիստ, Տուֆաշեն, Հայկասար ,Հայրենյաց և Պեմզաշեն գյուղեր)՝ ծրագրի ընդհանուր արժեքը մոտ՝ 125.000.000 ՀՀ դրամ, համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը մոտ ՝ 43.750.000/35%/ ՀՀ դրամ: Մեծ Մանթաշ , Փոքր Մանթաշ, Արևշատ և Գեղանիստ գյուղերի համար օրվա կարգավորիչ ջրավազան կկառուցվի 1000 խմ տարողությամբ , ինչպես նաև կտեղադրվի մեխանիկական զտման կայան: Պեմզաշեն գյուղի 9-րդ փողոցի 670մ D =100 դիամետրի խմելու ջրագծի վերանորոգում :Հայրենյաց , Տուֆաշեն ,Հայկասար գյուղերի կարիքների համար 2500 գծմ D = 200 դիամետրի խմելու ջրագծի կառուցում :

7. Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի թվով 13 գյուղերի ներհամայնքային ճանապարհների տուֆ քարով սալապատում՝ ծրագրի ընդհանուր արժեքը՝ 253.000.000 ՀՀ դրամ է, համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը՝ 101.200.000/40%/ ՀՀ դրամ:

Մ. Մովսիսյանը ներկայացրեց 7-րդ ծրագրի մանրամասները՝
Արթիկ քաղաքում՝ Կասյան փողոցի առաջին նրբանցքի 100 մ երկարությամբ և 3մ լայնությամբ ճանապարհի հենապատնեշի կառուցում, տուֆ քարով սալապատում և ջրահեռացման անցկացում, Մաշտոցի փողոցի 100 գծ.մ երկարությամբ և 4մ լայնությամբ ճանապարհի տուֆ քարով սալապատում և ջրահեռացման անցկացում, Արթիկի թիվ 3-րդ գերեզմանատուն տանող ճանապարհ՝ 300 մ և 5 մ լայնությամբ տուֆ քարով սալապատում, Գրիգոր Զոհրապ փողոցի 250 գծ մ երկարությամբ և 4մ լայնությամբ ճանապարհի տուֆ քարով սալապատում և ջրահեռացման անցկացում, Զորավար Անդրանիկ փողոցի 300 մ երկարությամբ և 6 մ լայնությամբ ճանապարհի տուֆ քարով սալապատում և ջրահեռացման անցկացում, Ղուկասյան փողոցի 300 գծմ երկարությամբ և 5մ լայնությամբ ճանապարհի տուֆ

քարով սալապատում, ջրահեռացման անցկացում և 50մ փլուզված հենապատնեշի կառուցում, Բաբաջանյան փողոցի 280գծմ երկարությամբ 4մ լայնությամբ ճանապարհի տուֆ քարով սալապատում, ջրահեռացման անցկացում, Գայի փողոցի 100 գծմ երկարությամբ և 5մ լայնությամբ ճանապարհի տուֆ քարով սալապատում, ջրահեռացման անցկացում, Հառիճ գյուղի 10-րդ փողոցում՝ 400 գծմ 4 մետր լայնությամբ, Սպանդարյան գյուղի 8-րդ փողոցում՝ 260 գծմ 4 մետր լայնությամբ, 12-րդ փողոցում 140 մ 4 լայնությամբ, Սարատակ գյուղի 6-րդ փողոցի ՝ 80 գծմ 5 մ լայնությամբ և գերեզմանատուն տանող ճանապարհ տանող 180 գծմ 5 մ լայնությամբ, Սարալանջ գյուղի 2-րդ փողոց 300 գծմ 5 մ լայնությամբ, Նահապետավան բնակավայր 3 –րդ փողոցի 400 գծմ 4 մետր լայնությամբ, Նոր Կյանք գյուղի 4-րդ փողոցի 400 գծմ 5 մետր լայնությամբ,
Անուշավան բնակավայր 6 –րդ փողոցի՝ 250 գծմ 4 մետր լայնությամբ,
23-րդ փողոցում ՝ 150գծմ 4մ լայնությամբ, Վարդաքար բնակավայր 4 –րդ փողոցի ՝ 300 գծմ 4 մետր լայնությամբ, Փանիկ բնակավայր 26 –րդ փողոցի՝ 400 գծմ 4 մետր լայնությամբ, Մեղրաշեն բնակավայր՝ 4 –րդ փողոցի՝ 400 գծմ 4 մետր լայնությամբ, Հովտաշեն բնակավայր 11–րդ փողոցի՝ 350 գծմ 4 մետր լայնությամբ, Գետափ բնակավայր՝ 1-ին փողոցի 6-րդ նրբանցքի 300 գծմ 4 մետր լայնությամբ, Լուսակերտ բնակավայր՝ 11 –րդ փողոցի՝ 300 գծմ 4 մետր լայնությամբ:
Ընդամենը կկառուցվի՝ 26.000 մք ճանապարհ:

Ծրագրերը ներկայացնելուց հետո Մ. Մովսիսյանը նշեց, որ 2022 թվականին նախանշված սուբվենցիոն ծրագրերը, որոշ հանգամանքներից ելնելով, 2022 թվականին չհասցվեց ընդգրկվել ներկայացված ծրագրերի ցանկում: Դրանք ընդգրկված են 2023 թվականի սուբվենցիոն ծրագրերի ցանկում:

Հնչեցին հարցեր՝

1. Վարչական շրջանի ղեկավար Գ. Ավետիսյանն ասաց, որ Վարդաքար գյուղում նախատեսվող փողոցը, եթե մոտ 70 մ էլ ասֆալտապատվի, կհասնի մինչև կամուրջ:

Մ. Մովսիսյանը պատասխանեց, որ նախագծող կազմակերպության հետ ուսումնասիրություն կանեն և հարցին լուծում կտրվի: Այս թվերը նախնական են, նախագծման փուլում կպարզեցվի և կունենանք լավագույն արդյունք:

Մ. Մովսիսյանը ներկաներին բացատրեց նաև սուբվենցիոն ծրագրերին մասնակցելու կարգը, առանձնահատկությունները, գումարային շեմը, որով էլ պայմանավորված են Արթիկ համայնքի 2023 թվականին իրականացվելիք սուվբենցիոն ծրագրի փաթեթներում ընդգրկված խնդիրները:

2. Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Հարությունյանն ասաց, որ Անկախության և Բաղրամյան փողոցների ասֆալտապատման հետ կապված հարցեր կան: Այդ փողոցներն ընդգրկված են ծրագրում, սակայն Ազատության հրապարակից դեպի Բաղրամյան փողոց տանող ճանապարհահատվածը մնում է անբարեկարգ: Մ. Մովսիսյանն ասաց, որ նախագծի մեջ փոփոխություն անելու

հնարավորություն կա:

Ա. Հարությունյանն ասաց, որ ավելի լավ կլինի նախագծում ներառել, և ոչ թե նախագծի մեջ փոփոխություններ անել: Եթե հետագայում ասֆալտապատենք Աբովյան փողոցի այդ փոքր հատվածը, ասֆալտը կարով կլինի, անորակ կլինի, ինչը ցանկալի չէ:

3. Ա. Գրիգորյանն առաջարկեց Չարենցի փողոցը նույնպես ընդգրկել ծրագրում:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Հարությունյանն ասաց, որ Ազատության հրապարակն իր հարակից փողոցներով և մայթերով պիտի վերանորոգվի, մոտ 2100 գծմ բազալտից եզրաքարերով պետք է նորոգվի, Չարենցի փողոցը նույնպես հարում է Ազատության հրապարակին և ներառված է ծրագրում:

4. Արթիկ համայնքի ղեկավարի խորհրդական Ա. Գրիգորյանն առաջարկեց յուրաքանչյուր ծրագրերի իրականացման ժամկետներ ֆիքսել:

Մ. Մովսիսյանը պատասխանեց, որ սուբվենցիոն ծրագիրն ինքնին ենթադրում է ժամկետ, դրանք իրականանալու են նշված տարվա ընթացքում, սակայն ավելի ստույգ ժամկետներ գործնականում հնարավոր չէ: Աշխատանքը կախված է մի շարք գերատեսչությունների հետ, ինչը գրեթե անհնարին է դարձնում հստակ ժամկետների ամրագրումը: Մինչ ս/թ դեկտեմբերի 31-ն Արթիկի համայնքապետարանը պետք է հստակ ունենա սուբվենցիոն ծրագրի փաթեթները և նախագծերը, իսկ 2023 թվականի հունվարից կզբաղվի մրցույթների հայտարարմամբ, պայմանագրերի կնքմամբ, իսկ աշխանաքների սեզոնի բացման հետ մեկտեղ՝ բուն շինարարական աշխատանքներով:

5. Հառիճ գյուղի վարչական ղեկավար Ռ. Նազարեթյանն առաջարկեց 500 մետր ընդհանուր երկարությամբ փողոցի 100 մետ հատվածն էլ ընդգրկել ծրագրում, որ ճանապարհի ասֆալտն ամբողջական լինի: Մ. Մովսիսյանն մասնակի ընդունեց առաջարկը: Քանի որ վարչական շրջանները շատ են, խնդիրները նույնպես, ֆինանսական հնարավորությունների շրջանակներում են իրականացվում հիմնանորոգումները: Եթե ինչ-որ մի տեղ կիսատ է մնում աշխատանքը, ապա դրանք կներառվեն հաջորդ տարիների ծրագրերում:

6. Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Մակեյանն առարկություն հայտնեց թվով 8 գյուղերի խմելու ջրագծերի կառուցման և վերանորոգման հարցում՝ Մեծ Մանթաշ, Փոքր Մանթաշ, Արևշատ, Գեղանիստ, Պեմզաշեն, Հայրենյաց, Տուֆաշեն, Հայկասար գյուղերում և Մեծ Մանթաշ, Արևշատ, Գեղանիստ գյուղերի համար օրվա կարգավորիչ ջրավազանի կառուցում՝ 1000 մ^3 տարողությամբ: Նա բացատրեց իր առարկությունը նրանով, որ խմելու ջրի համար ոչ մի դրամ գանձում չկա, սակայն այս ծրագրերն իրենց գյուղերում պետք է կյանքի կոչվեն: Այստեղ տրամաբանությունից դուրս իրավիճակ է ստեղծվել, հավասարություն սկզբունքով առաջնորդություն չկա, համայնքի մի վարչական շրջանից խմելու ջրի դիմաց միլլիոնների գանձում է լինում, ծրագրի շահառու գյուղերի բնակիչները արտոնյալ

պայմաններով օգտվում են խմելու ջրից: 30 տարիների ընթացքում կառավարությունն իրենց առաջարկել է ցանցը բարեկարգել, սակայն այդ համայնքները մերժել են այդ ծրագրերը, խոշորացումից հետո էլ համայնքից են պահանջում միլլոնների հասնող այս ծրագրերը կյանքի կոչել, քանի որ վատորակ ջուր են խմում, իսկ 30 տարիների ընթացքում բնակչությանն այդ ջուրը ձեռնտու էր, իսկ խոշորացումից հետո չգիտես ինչու՝ ոչ: Ինչու պիտի մյուս վարչական շրջանների բնակիչները գումարներ գանձեն, որ Փոքր Մանթաշի վթարները վերականգնվեն: Վթար լինում է, որովհետև ճնշումը խողովակների վրա մեծ է: Սա քննարկման առարկա է: Վ. Մակեյանն առաջարկեց այդ վարչական շրջանների բնակիչների համար ամսական որոշակի գումար սահմանել նրանց հետ բացատրական աշխատանքներ տանել:

Զեկուցող Մ. Մովսիսյանը պատասխանեց, որ այստեղ թյուրըմբռնում կա, այս 4 գյուղերի ծրագրերը ենթադրում են միայն 1000 մ^3 օրվա կարգավորիչ ջրավազանի կառուցում: Վարչապետի հանձնարարականով այս գյուղերում ջրի որակի բարձրացման համար առանձին ծրագիր է իրականացվելու:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Հարությունյանն առաջարկեց այդ բնակավայրերում ներքին ցանի կառուցման և գանձումների համար առանձին համայնքային կազմակերպություն բացել:

Մ. Մովսիսյանը ներկաներին բացատրեց, որ թեպետ Արթիկ համայնքի մի շարք հրատապ խնդիրներ սուբվենցիոն ծրագրերում չեն ընդգրկվել, բայց և այնպես այդ հարցերը մեր ուշադրության կենտրոնում են և դրանց նույնպես կտրվեն հստակ լուծումներ:

Նա շնորհակալություն հայտնեց ներկաներին մասնակցության համար:

Նիստը վարող Ա. Աջամօղլյանն Արթիկ համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանի և համայնքի բնակիչների անունից հայտնեց համայնքի դրական դիրքորոշումը:

Նիստն ավարտվեց ժամը 15:43-ին:

Նիստը վարեց՝

Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ
Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ _____ Ա. Աջամօղլյան

Արձանագրեց՝ Արթիկ համայնքի
ղեկավարի օգնական՝ _____ Տ. Զարչյան

Հանրային քննարկման առցանց հեռարձակման հղումը՝ https://youtu.be/lxYVhNpso4M

Հանրային քննարկումներին մասնակիցների ցանկը կցվում է արձանագրությանը: